ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

DECENT WORK NOW

Աշխատանքային միջավայր
Առողջ, ավնտանգ և ՈՉ ՄԻԱՅՆ

Իրազեկման թերթիկ գործատուների և աշխատողների համար

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ACTOR
APR Group

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 23, մաս 1-ին.

Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության, աշխատանքի արդար ու բարենպաստ պայմանների և գործազրկությունից պաշտպանվելու իրավունք:

Աշխատանքի իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է, սերտորեն առնչվում է մարդու այլ հիմնարար իրավունքների հետ՝ նախադրյալներ ստեղծելով այդ իրավունքների իրականացման համար: Աշխատանքի իրավունքն իրենից ներկայացնում է մի շարք իրավունքների փոխկապակցված ամբողջություն, ինչպիսիք են օրինակ՝

- աշխատանքն ազատորեն ընտրելու իրավունքը,
- առանց որևէ խտրականության, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը,
- հանգստի իրավունքը,
- վճարովի արձակուրդի իրավունքը,
- ***արժանապատիվ աշխատանքային միջավայրի իրավունքը,***
- այլ իրավունքներ:

Նշված իրավունքների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում առողջ և անվտանգ, ոչ խտրական, արդար և բարենպաստ՝ մարդու համընդհանուր իրավունքների հարգման վրա հիմնված աշխատանքային միջավայրի (աշխատանքային պայմանների) իրավունքը, ինչպես նաև դրա սահմանմանն ու բարելավմանը մասնակցելու իրավունքը: Այս իրավունքի իրացման ոչ իրավաչափ սահմանափակումները կարող են հանգեցնել աշխատող անձանց մյուս բոլոր ախատանքային իրավունքների արդյունավետ իրականացման խոչընդոտների, քանի որ մարդու

աշխատանքային այլ իրավունքների իրացումը հնարավոր է միայն արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու դեպքում:

Արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու պարտականությունն առաջին հերթին կրում է **գործատուն՝** ինչպես ներպատական օրենսդրությամբ սահմանված կարգավորումների, այնպես էլ՝ պետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում, իսկ **պետությունն իր հերթին վերահսկողություն է իրականացնում արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու գործատուի պարտականության կատարման նկատմամբ,** անհրաժեշտության դեպքում որոշ դեպքերում կիրառելով պատասխանատվության համապատասխան միջոցներ: Օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 96[1] հոդվածը տուգանքի տեսքով վարչական պատասխանատվություն է նախատեսում գործատուի նկատմամբ՝ աշխատանքի առողջ և անվտանգ կատարման պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգերը կամ տեխնիկական անվտանգության կանոնները խախտելու դեպքում:

Արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու պետության պարտականությունը սահմանվում է հետևյալ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված դրույթներով՝

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր,
2. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա,
3. «Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր,
4. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր,

5. «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիա
6. «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» Ժնևի կոնվենցիա,
7. Աշխատանքի միջազգային կազմակերպության[1] կոնվենցիաներ,

իսկ ազգային օրենսդրությամբ արժանապատիվ աշխատանքային միջավայր ապահովելու պարտականությունը սահմանվում է հետևյալ իրավական ակտերով՝

8. ՀՀ Սահմանադրություն,
9. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,
10. «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք,
11. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենք,
12. ՀՀ կառավարության 15 հուլիսի 2004 թ. N 1089-Ն և 29 հունիսի 2006 թ. N 1007-Ն որոշումներ,
13. այլ իրավական ակտեր:

Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային միջավայր.

Յուրաքանչյուր անձ իրավունք ունի աշխատելու իր կյանքի և առողջության համար անվնաս և անվտանգ աշխատանքային պայմաններում, իսկ գործատուն, օրենքով սահմանած չափորոշիչներին համապատասխան, պարտավոր է ստեղծել աշխատողի կյանքը, առողջությունը պահպանող աշխատանքային պայմաններ: Գործատուի այս պարտականությունը պետք է կրի պարբերաբար բնույթ՝ արդյունավետ միջոցներ ձեռնարկելով աշխատողի առողջությանը և

[1] Աշխատանքի միջազգային կազմակերպությունը Միավորված ազգերի կազմակերպության հաստատություն է, զբաղվում է աշխատանքային հարաբերությունների կարգավորման հարցերով:

անվտանգությանը սպառնացող ռիսկերը կանխարգելելու և նվազագույնի հասցնելու համար:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 82.

Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, **ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների,** առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի **իրավունք:**

ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 245, մաս 1-ին.

Յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս, *կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղի մատչելիության ապահովումը (աշխատավայրում խելամիտ հարմարեցումներ տրամադրելը) երաշխավորվում է օրենքներով:*

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 1-ին, կետ 3-րդ.

Բոլոր աշխատողները ունեն անվտանգ և առողջարար աշխատանքային պայմանների իրավունք:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, 3-րդ հոդված.

Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը, խորհրդակցելով գործատուների և աշխատողների

կազմակերպությունների հետ, պարտավորվում են՝

1. ձևակերպել, իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող առանձնահատուկ ազգային քաղաքականությունը: Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությունը վնասելու հնարավորության կանխումը՝ մասնավորապես նվազեցնելով աշխատանքային միջավայրին հատուկ վտանգների պատճառները,

2. թողարկել անվտանգության և առողջության պահպանման կանոնակարգեր,

3. ապահովել այդ կանոնակարգերի կիրարկումը վերահսկողության միջոցներով,

4. խթանել աշխատանքային առողջության պահպանման ծառայությունների աստիճանական զարգացումը բոլոր աշխատողների համար՝ հիմնականում կանխիչ և խորհրդատվական գործառույթներով:

————————————

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

DECENT WORK NOW
ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ ՀԻՄԱ

Ո՞մ դիմել, երբ խախտվել են ձեր աշխատանքային իրավունքները

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին՝
Թեժ գիծ՝ 81-07
Էլեկտրոնային դիմելու հղում
www.employeeprotect.am/am/report

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Անվճար խորհրդատվություն՝ 077 342268
Էլեկտրոնային դիմելու հղում
www.facebook.com/DecentWorkNow
www.arhmiutyun.am/contact

Մարդու իրավունքների պաշտպան
Թեժ գիծ՝ 116
Մարզային գրասենյակներ
www.ombuds.am/am/site/ApplyTeamAddress
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Թեժ գիծ՝ 114
Էլեկտրոնային դիմելու հղում
www.e-request.am/hy

HELSINKI CITIZENS ASSEMBLY
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ
ACTOR
APR Group